

3.1 Ընտրություններին մասնակցության իրավունք

Որպես ընտրող

3.1.1

Ընտրություններին կարող են մասնակցել Հայաստանում գործող բոլոր այն հասարակական կազմակերպությունները, պետական որևէ մասնակցություն չունեցող միությունները և հիմնադրամները, ջրօգտագործողների ընկերությունները և ոչ առևտրային ֆերմերային կոոպերատիվները, որոնք ՀՀ արդարադատության նախարարությունում գրանցվել են մինչ 2010թ. մարտի 1-ը: Կազմակերպությունների մասնաճյուղերը և ներկայացուցչությունները, անկախ իրենց պետական գրանցումից, ինքնուրույն հանդես գալ չեն կարող:

3.1.2

Կազմակերպությունը ընտրություններին մասնակցում է մեկ ներկայացուցչի միջոցով:

3.1.3

Կազմակերպության լիազոր ներկայացուցիչ չեն կարող լինել (ա) ՀՀ պետական և տեղական իշխանությունների կառավարման, վարչական մարմիններում ղեկավար պաշտոններ զբաղեցնող անձինք, կամ (բ) ՀՀ պետական և համայնքային ծառայողներ, ՀՄՀ-Հայաստան ծրագրից փաստացի ֆինանսական պատվեր ունեցող ֆիզիկական անձինք և իրավաբանական անձանց սեփականատերերը կամ ղեկավար մարմինների ներկայացուցիչները:

3.1.4

Ընտրություններին մասնակցելու նպատակով շահագրգիռ անձինք պետք է ներկայացնեն մասնակցության վավերական հայտ:

3.1.5

Հայտը համարվում է վավեր, եթե լրացված է ամբողջությամբ, կնքված կազմակերպության կնիքով և ստորագրված կազմակերպության ղեկավարի կողմից, ինչպես նաև որպես հավելվածներ պարունակում է հետևյալ փաստաթղթերը՝ կազմակերպության գրանցման վկայականի պատճենը, կազմակերպության կողմից տրված՝ ստորագրված և կնքված լիազորագիրը (եթե ներկայացուցիչը կազմակերպության ղեկավարը չէ), ընտրողի անձնագրի պատճենը:

Որպես հավանական ընտրվող կամ ՀՄՀ-Հայաստան ՇԽ/ԿԽ անդամության թեկնածու

3.1.6

Ընտրություններին որպես թեկնածու կարող են մասնակցել այն անձինք, որոնք իրավունք ունեն հանդես գալ որպես ընտրող, կատարել են համապատասխան նշումը մասնակցության հայտի 3.1 կետում և բավարարում են սույն կարգի 3.1.7 կետի պահանջներին:

3.1.7

Անձը կարող է առաջադրվել որպես ՇԽ/ԿԽ անդամի թեկնածու, եթե ունի ՀՄՀ-Հայաստան ծրագրի առաքելությանն ու նպատակներին (օրինակ՝ ջրային ոլորտ, գյուղատնտեսության զարգացում, համայնքների զարգացում/կառավարում, բնապահպանություն, տնտեսական զարգացում, ՀՄՀ-Հայաստան ծրագրի շահառու խմբերին առնչվող շահապաշտպան, գիտահետազոտական գործունեություն) առնչվող առնվազն 2 տարվա աշխատանքային և/կամ մասնագիտական փորձառություն և կցել է համառոտ կենսագրությունը: